

**ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/1121Ա**

18/12/2013

**«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԿԱՊԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԿԱՊԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է.1.» կետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ի 48-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի (18.12.2013թ. արձանագրություն թիվ 58) եզրակացությունը և հաշվի առնելով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության 03.12.2013թ. և 16.12.2013թ. էլեկտրոնային միջնորդագրերը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Գրանցել «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Կապան» մասնաճյուղի կանոնադրությունում կատարված փոփոխությունը՝ հաստատված ապահովագրական ընկերության խորհրդի 15.10.2013թ. որոշմամբ՝ կապված մասնաճյուղի գործունեության վայրի փոփոխության հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ